ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____»_____2023Թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

2023թ._____

Երևան

Հավելված

___.___.20___թ. և բաղկացած է _____ թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐևԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«_____» _____2023Թ.

N_____-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ԱՎԻՆՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 15.10.2010 թ.

գրանցման համար՝ 286.210.07718

հարկ վճարողի հաշվառման համար՝

02523863

15.10.2010թ. գրանցված կանոնադրության թիվ_____ փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

«_____»_____2023թ.

աշխատակից՝

_____

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

ԵՐԵՎԱՆ 2023Թ.

1.«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնադրության 3.5-րդ կետը «ժ» ենթակետից հետո լրացնել «ժ1» ենթակետով.

«ժ1) ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված՝ գերեզմանատների բարեկարգման, կառուցապատման, այդ թվում՝ սահմանված չափերից ավել չափերով գերեզմանների բարեկարգման, կառուցապատման կամ այլ քաղաքաշինական նորմերի խախտման, գերեզմանատանը հատկացված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը հակասող գործունեության իրականացման, գերեզմանն օգտագործողի կամ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի համար սահմանված պահանջներն այդ անձանց կողմից խախտված լինելու կամ հուղարկավորության կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերի ու կանոնների պահանջների խախատման դեպքեր արձանագրված լինելու պարագայում այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին:».

2) Կանոնադրության 3-րդ գլուխը 3.5-րդ կետից հետո լրացնել 3.6-րդ, 3.7-րդ և 3.8-րդ կետերով՝

«3.6 Կազմակերպության արդյունավետ գործունեության ապահովման նպատակով՝ գերեզմանատների շահագործման ապահովումն իրականացվում է գերեզմանատների վարիչների միջոցով:

3.7 Գերեզման օգտագործողին՝ իրեն հատկացված գերեզմանի սահմաններում գերեզմանների, գերեզմանատեղերի բարեկարգման և տապանաքարերի, մահարձանների տեղադրման աշխատանքներ կատարելու համար Կազմակերպության տնօրինության անունից համաձայնություն տալիս է տվյալ գերեզմանատան վարիչը (կամ տվյալ գերեզմանատան վարիչի իրավունքները և պարտականություններն իրականացնող անձը):

3.8 Գերեզմանատան վարիչի կողմից Կանոնադրության 3.7-րդ կետով նախատեսված պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը հիմք է վերջինիս նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու համար:»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 15.10.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) շահագործմանը հանձնված Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող գերեզմանատների բնականոն աշխատանքներն ապահովելու ընթացքում առաջանում են գերեզմանատների շահագործման, կառուցապատման, բարեկարգման պահանջների, հուղարկավորության կազմակերպման կարգի պահանջների պահպանման հետ կապված որոշակի խնդիրներ, որոնք Կազմակերպության գործադիր մարմինը միանձնյա հնարավորություն չի ունենում արդյունավետ ապահովել: ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Կազմակերպության գործունեության արդյունավետ իրականացման նպատակով առաջարկվում է գերեզմանատան շահագործման ապահովումն իրականացնել գերեզմանատան վարիչների միջոցով, հաշվի առնելով, որ Կազմակերպության կողմից շահագործվող գերեզմանատներում հուղարկավորությունների համար գերեզմանատեղերի հատկացումը, գերեզմանատարածքների բարեկարգման աշխատանքների նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանելն իրականացվում է անմիջապես գերեզմանատների վարիչների կողմից: Նախագծով նախատեսվում է նաև գերեզմանատների վարիչների համար վերոնշյալ գործառույթը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն սահմանող դրույթ: Բացի այդ, Կազմակերպության կանոնադրության փոփոխության արդյունքում Կազմակերպության տնօրենի համար սահմանվում է ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված՝ գերեզմանատների բարեկարգման, կառուցապատման, այդ թվում՝ սահմանված չափերից ավել չափերով գերեզմանների բարեկարգման, կառուցապատման կամ այլ քաղաքաշինական նորմերի խախտման, գերեզմանատանը հատկացված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը հակասող գործունեության իրականացման, գերեզմանն օգտագործողի կամ հուղարկավորության կազմակերպումը ստանձնած անձի համար սահմանված պահանջներն այդ անձանց կողմից խախտված լինելու կամ հուղարկավորության կազմակերպման և իրականացման համար նախատեսված կարգերի ու կանոնների պահանջների խախտման դեպքեր արձանագրված լինելու պարագայում իրավապահ մարմիններին իրազեկելու իրավասություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ  ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ